

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

Անհրաժեշտությունը

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին» N 65-Ա որոշման 5.10 կետով՝ «Կառավարությունն անթույլատրելի է համարում, որ գյուղատնտեսական նշանակության հողերի 1/3-ը մնացել է անմշակ: Կառավարությունը գործուն քայլեր է ձեռնարկելու չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերը նպատակայնորեն օգտագործելու ուղղությամբ: Այս նպատակին հասնելու համար մշակվելու են խթաններ և մեխանիզմներ:», ինչպես նաև ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 23-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 68-Լ որոշման Հավելված 2-ի 6-րդ և 7-րդ կետերով:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Գյուղատնտեսական նշանակության հողերի շուրջ 1/3-ը ներկայումս անմշակ է: Դա պայմանավորված է մի քանի փոխկապակցված գործոններով, ինչպիսիք են գյուղացիական տնտեսությունների անարդյունավետ կառուցվածքը, որը բնութագրվում է տնտեսությունների չափազանց մեծ մասնատվածությամբ և փոքր չափերով, ծերացող գյուղական բնակչությունը, արտագաղթը, գյուղատնտեսական արտադրության կախվածությունը ոռոգման ջրից և ենթակառուցվածքների առկայությունից ու վիճակից, կլիմայի փոփոխությունը, հողերի դեգրադացիան և այլն: Մասնավորապես, 2014 թվականին, գյուղատնտեսական հողամասերի միջին տարածքը կազմում էր 1.48 հա (սկսած 0.72 հա-ից ՀՀ Արարատի մարզում մինչև 2.54 հա ՀՀ Շիրակի մարզում) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող տնտեսությունների համար և 62.57 հա (սկսած 18.38 հա-ից ՀՀ Արարատի մարզում մինչև 182 հա ՀՀ Արմավիրի մարզում) այդպիսի կարգավիճակ ունեցողների դեպքում: Գյուղացիական տնտեսությունների 45 տոկոսը կազմված են երեք և ավելի հողամասերից, իսկ 20 տոկոսը՝ հինգ և ավելի հողամասերից: Գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածությունն ու փոքր չափսերը, ի թիվս այլ պատճառների, բերում են գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության նվազեցման և խոչընդոտում են գյուղատնտեսական արտադրության արդյունավետ կազմակերպմանը:

Միաժամանակ, գործող իրավական և կազմակերպական կառուցակարգերը, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքով սահմանված կառուցակարգերը, չեն նախատեսում Կառավարության ակտիվ մասնակցություն գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման մակարդակի բարձրացմանը:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի «ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» N 1886-Լ որոշման Հավելված N 1-ի 13-րդ կետով սահմանված

գյուղատնտեսության ոլորտի գերակայություններից է հողային բարեփոխումները՝ միտված չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության մեջ ընդգրկմանը, հողօգտագործման արդյունավետության բարձրացմանը և հողերի շուկայի զարգացմանը:

Կարգավորման նպատակը և բնույթը

Նախագծի ընդունման նպատակն է օրենսդրական հենքի ստեղծումով նպաստել կայուն գյուղատնտեսության և գյուղական բնակավայրերի զարգացմանը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի չօգտագործման մակարդակի կրճատման, օգտագործման արդյունավետության բարձրացման, մասնատվածության մակարդակի նվազեցման, հողերի շուկայի զարգացման միջոցով:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում հնարավորություն կստեղծվի խթանել փոքրածավալ արտադրությունից դեպի ժամանակակից, տեխնոլոգիապես հագեցած, շուկայի զարգացմանը միտված և բարձր ավելացված արժեք ստեղծող գյուղատնտեսության անցումը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

«Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

«Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում առաջանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ կատարելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումների ընդունման անհրաժեշտություն:

«Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը չի հակասում ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին: